

4. Ա Ր Տ Ա Ք Ի Ն Հ Ա Տ Վ Ա Ծ

**4.1. Վճարային հաշվեկշիռը
2013 թվականի հունվար-հունիսին**

Վճարային հաշվեկշռի միասնականացված հոդվածների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանրապետության արտաքին գործառնությունները 2013 թվականի հունվար-հունիսին հիմնականում կապված են եղել արտաքին առևտրի հետ: Կապիտալի ներհոսքը գլխավորապես կատարվել է պաշտոնական գրանտների, միջպետական վարկի միջոցով և միջազգային կազմակերպություններից ստացված ֆինանսական օգնության հաշվին*։ Ըստ նախնական տվյալների, 2013 թվականի հունվար-հունիսին ԼՂՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասորդը կազմել է 22611.2 մլն դրամ:

Ապրանքների գծով պակասորդը 2013 թվականի հունվար-հունիսին կազմել է 38867.4 մլն դրամ և 2012թ. հունվար-հունիսի նկատմամբ նվազել է 9.5 տոկոսով:

Ծառայությունների բնագավառում, ստացված տվյալների ամփոփման արդյունքներով, 2013 թվականի հունվար-հունիսին հաշվեկշռի պակասորդը կազմել է 2077.6 մլն դրամ:

Ընդհանուր առմամբ, 2013 թվականի հունվար-հունիսին ապրանքների և ծառայությունների գծով պակասորդը կազմել է 40945.0 մլն դրամ (2012թ. հունվար-հունիսի 87.3 տոկոսը), եկամուտների գծով հաշվեկշռի պակասորդը՝ 69.2 մլն դրամ, իսկ ընթացիկ տրանսֆերտների (նվիրատվությունների) սալոն՝ 18264.6 մլն դրամ (92.4 տոկոսը):

Կապիտալի հաշվի հոդվածների սալոն կազմել է 2821.4 մլն դրամ:

2013 թվականի հունվար-հունիսին ԼՂՀ վճարային հաշվեկշռի ֆինանսական հոդվածները ունեցել են հետևյալ պատկերը՝

- ուղղակի ներդրումները տնտեսության մեջ՝ 5025.1 մլն դրամ,
- պորտֆելային ներդրումների պասիվային մասը՝ -1947.6 մլն դրամ,
- ալլ ներդրումների ակտիվային մասը՝ -46358.2 մլն դրամ,
- ալլ ներդրումներից պարտավորությունները՝ 62625.2 մլն դրամ:

Վճարային հաշվեկշռի վերլուծական ներկայացումից պարզ երևում է, որ մեր տնտեսությունը շարունակում է կախվածության մեջ գտնվել արտաքին աշխարհից:

*ԼՂՀ վճարային հաշվեկշռների վերլուծական ներկայացումը
2012-2013թթ. հունվար- հունիսին*

/մլն դրամ/

	2012թ. հունվար-հունիս	2013թ. հունվար-հունիս	Բացարձակ փոփոխությունը
Ա.Ընթացիկ հաշիվ, առանց Ե խմբի	-28007.9	-22611.2	5396.7
Ապրանքներ, կրեդիտ	11203.3	9181.5	-2021.8
Արտահանում f.o.b.	11203.3	9181.5	-2021.8
Այլը	0.0	0.0	0.0
Ապրանքներ, դեբետ	-54174.9	-48048.9	6126.0
Ներմուծում f.o.b.	-54174.9	-48048.9	6126.0
Այլը	0.0	0.0	0.0
Հաշվեկշիռ ապրանքների գծով	-42971.6	-38867.4	4104.2
Ծառայություններ, կրեդիտ	1368.8	2140.8	772.0
Տրանսպորտային	128.2	101.5	-26.7
Այլը	1240.6	2039.3	798.7
Ծառայություններ, դեբետ	-5300.9	-4218.4	1082.5
Տրանսպորտային	-2304.3	-2069.7	234.6
Այլը	-2996.6	-2148.7	847.9
Հաշվեկշիռ ծառայությունների գծով	-3932.1	-2077.6	1854.5
Հաշվեկշիռ ապրանքների և ծառայությունների գծով	-46903.7	-40945.0	5958.7
Եկամուտներ, կրեդիտ	369.6	123.5	-246.1
Եկամուտներ, դեբետ	-1248.6	-54.3	1194.3
Հաշվեկշիռ եկամուտների գծով	-879.0	69.2	948.2
Հաշվեկշիռ ապրանքների, ծառայությունների և եկամուտների գծով	-47782.7	-40875.8	6906.9
Ընթացիկ տրանսֆերտներ, կրեդիտ	19926.8	18319.4	-1607.4
Ընթացիկ տրանսֆերտներ, դեբետ	-152.0	-54.8	97.2
Հաշվեկշիռ ընթացիկ տրանսֆերտների գծով	19774.8	18264.6	-1510.2

* Կապիտալի արտահոսքը վճարային հաշվեկշռում չի արտացոլված՝ այդ տվյալների հավաքագրման համակարգում մի շարք խնդիրների առկայության պատճառով:

	2012թ. հունվար-հունիս	2013թ. հունվար-հունիս	Բացարձակ փոփոխությունը
Բ. Կապիտալի հաշիվ, առանց Ե խմբի	3412.7	2821.4	-591.3
Կապիտալի հաշիվ, կրեդիտ	3412.7	2821.4	-591.3
Կապիտալի հաշիվ, դեբետ	0.0	0.0	0.0
	0.0	0.0	0.0
Ընդամենը Ա խումբ գումարած Բ	-24595.2	-19789.8	4805.4
Գ. Ֆինանսական հաշիվ, առանց Ե խմբի	24446.7	19344.5	-5102.2
Ուղղակի ներդրումներ այլ երկրներ	0.0	0.0	0.0
Ուղղակի ներդրումներ այլ երկրներից	1535.4	5025.1	3489.7
Պորտֆելային ներդրումներից ակտիվներ	0.0	0.0	0.0
Արժեթղթերում մասնակցում	0.0	0.0	0.0
Պարտային արժեթուղթ	0.0	0.0	0.0
Պորտֆելային ներդրումներից պարտավորություններ	126.5	-1947.6	-2074.1
Արժեթղթերում մասնակցում	0.0	0.0	0.0
Պարտային արժեթուղթ	126.5	-1947.6	-2074.1
Ակտիվներ այլ ներդրումներից	-45214.5	-46358.2	-1143.7
Դրամավարկային կարգավորման մարմիններ	0.0	0.0	0.0
Պետական կառավարման մարմիններ	-31078.4	-33589.2	-2510.8
Բանկեր	1350.3	4579.5	3229.2
Այլ հատվածներ	-15486.4	-17348.5	-1862.1
Պարտավորություններ այլ ներդրումներից	67999.3	62625.2	-5374.1
Դրամավարկային կարգավորման մարմիններ	0.0	0.0	0.0
Պետական կառավարման մարմիններ	22971.2	24083.4	1112.2
Բանկեր	-447.1	-3170.9	-2723.8
Այլ հատվածներ	45475.2	41712.7	-3762.5
Ընդամենը, խումբ Ա-ից Գ	-148.5	-445.3	-296.8
Դ. Սխալներ և բացթողումներ մաքուր	148.5	445.3	296.8
Ընդամենը, խումբ Ա-ից Դ (ընդհանուր հաշվեկշիռ)	0.0	0.0	0.0
Ե. Ֆինանսական հոդվածներ	0.0	0.0	0.0
Ռեզերվային ակտիվներ	0.0	0.0	0.0
Հիմնադրամի վարկի և Հիմնադրամից փոխառությունների օգտագործում	0.0	0.0	0.0
Բացառիկ ֆինանսավորում	0.0	0.0	0.0
Արտասահմանյան ռեզերվներ (իրավունքներ) հանդիսացող պարտավորություններ	0.0	0.0	0.0